ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ծրագրի նպատակն է պատրաստել հանրային ոլորտի կազմակերպությունների, հանրային ծառայության տարբեր համակարգերի համար բարձրակարգ կառավարիչներ, ծառայողներ, մասնագետներ: Ծրագրի շրջանավարտները կտիրապետեն հանրային ոլորտի կառավարման գիտելիքների, հմտությունների և կարողությունների, ինչպես տնտեսության կայուն զարգացման, այնպես էլ ճգնաժամի պայմաններում: Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները և ՀՀ հանրային կառավարման համակարգի արդի պահանջները:

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
18.20-ից

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

կառավարման մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

Մոդուլ 1
1.Տնտեսագիտություն/Վերլուծական աշխատանք (Ը)
2. Մենեջմենթի հիմունքներ/Վերլուծական աշխատանք (Ը)

Մոդուլ 2
1. Հետազոտության մեթոդներ
2.Էկոնոմետրիկա և տվյալների վերլուծություն

Մոդուլ 3
1. Հանրային կառավարում
2.Քաղաքագիտություն/Վարչական իրավունք (Ը)

Մոդուլ 4
1. Ֆինանսական կառավարումը հանրային ոլորտում
2. Գնումների գործընթացը հանրային ոլորտում/Բյուջետավորում և ֆոնդահայթայթում (Ը)

Մոդուլ 5
1.Դասավանդման մեթոդներ
2.Հետազոտական սեմինար

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 6
1. Ռազմավարական կառավարում հանրային ոլորտում
2. Նախագծերի կառավարումը հանրային ոլորտում

Մոդուլ 7
1. Հանրային ծառայությունների համակարգ
2. Առողջապահության կառավարում/Կրթության կառավարում (Ը)

Մոդուլ 8
1. Հանրային-մասնավոր գործընկերություն
2. Տեղական տնտեսության զարգացում/Պետական գույքի կառավարում (Ը)

Մոդուլ 9
1. Հանրային քաղաքականության վերլուծություն և մշակում
2. Արտաքին տնտեսական քաղաքականություն/ Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (Ը)

Մոդուլ 10
1. Հետազոտության փորձառություն/ Հաղորդակցման և առաջնորդման հմտություններ/ ՄՌԿ

երրորդ կիսամյակ

Մոդուլ 11
1. Էլեկտրոնային կառավարում հանրային ոլորտում/ Մեդիագրագիտություն(Ը)
2. Հանրային մասնակցություն և վերահսկողություն/Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (Ը)

Մոդուլ 12
Գիտահետազոտական փորձառություն (տևողությունը՝ 10 շաբաթ)

Մոդուլ 13
Մագիստրոսական թեզ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Գագիկ Ասլանյան

Կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1977թ.- ից ՀՍՍՀ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտում, 1990 – 1999թթ աշխատել է Երևանի «Պլաստիկ» արտադրական միավորումում որպես տնօրենի տեղակալ, 1999 թ. – 2003 թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ նախագահի տեղակալ, 2004 թ. – 2006 թ. աշխատել է ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունում՝ նախարարի տեղակալ, 2006 – 2022 թթ.՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ, 2006թ.- ից մինչ օրս ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ (համատեղությամբ):

Խորեն Մխիթարյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 1990թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ: Համահեղինակ է «Մենեջմենթ» (4 անգամ բարելավված և վերահրատարակված) դասագրքի, ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածի հեղինակ է: Մասնակցել է բազմաթիվ վերապատրաստման դասընթացների:Դասավանդում է SWISS UMEF համալսարանում որպես հրավիրյալ պրոֆեսոր:

Նելլի Շահնազարյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ, ունի ավելի քան 30 տարվա դասավանդման փորձ: 2010-2018թթ.՝ Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի վարիչ, 2002թ.-մինչ օրս՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, դոցենտ (համատեղությամբ), 2012-2018թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա, դոցենտ (համատեղությամբ): Աշխատանքին զուգահեռ մասնակցել է բազմաթիվ վերապատրաստման դասընթացների: Համահեղինակ է 2 ուսումնական ձեռնարկի, «Մենեջմենթ» (4 անգամ բարելավված և վերահրատարակված) դասագրքի, ավելի քան 25 գիտական հոդվածների հեղինակ է, հանդիսանում է 10 տնտեսագիտական թեկնածուի գիտական ղեկավար:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Արտաշես Բախշյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1983 թվականին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբեր մարմիններում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ՝ ՀՀ հարկային պետական տեսչությունում, ՀՀ մաքսային վարչությունում, Երևանի քաղաքապետարանում, ՀՀ նախագահի աշխատակազմում, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում, ՀՀ վերահսկողական ծառայությունում, 2008-2016 թթ. աշխատել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ, 2017-2020թթ. ՀՀ ԱԺ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ, 2020 թ.-ից մինչ օրս ՀՀ Հաշվեքննիչ պալատում՝ որպես խորհրդական:

Աշոտ Զալինյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ է: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1985 թվականից, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ պետական կառավարմանև տեղական ինքնակառավարման տարբեր մարմիններում՝ ՀՀ սննդի արդյունաբերության նախարարությունում, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, Երևանի «Կենտրոն» վարչական տարածքի կառավարման մարմնում, ՀՀ կառավարությանն առընթերտեղեկատվության և գրահրատարակչության վարչությունում, եղել է ՀՀ պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հարցերով խորհրդական Մեծ Բրիտանիայի DFID կազմակերպության և ՀՀ կառավարության կողմից իրականացվող ՀՀպետական կառավարման բարեփոխումների ծրագրի շրջանակներում, ՀՀ արտաքին և ներքին վերահսկողության և աուդիտի համակարգերի բարեփոխումների հարցերով խորհրդական, Հոլանդիայի կառավարության «Development Partnerships UK Limited»-ի և «AMERIA» խորհրդատվական ընկերության հետ համատեղ իրականացվող ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում: Զբաղեցրել է գլխավոր դատախազության Ֆինանսատնտեսական վաչության պետի, ՀՀ քննչական կոմիտեի Դեպարտամենտի ղեկավարի, այնուհետև նախագահի խորհրդականի պաշտոններ: 2019 թ. «Էլ Էլ Քոնսալթինգ» իրավակառավարչական խորհրդատվական ընկերության հիմնադիրն է: Ունի ավելի քան երեսուն տարվա գիտամանկավարժական գործունեության փորձ ՀՀ տարբեր բուհերում:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Աբրամ Բախչագուլյան

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու: Ունի հանրային կառավարման համակարգում շուրջ 15 տարվա կառավարման փորձ: 2017 թ. մայիսի 5-ին նշանակվել է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի անդամ, օրենքի ուժով 2018թ. ապրիլի 9-ից ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ է: 2011- 2014թթ.՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ: 2007–2011թթ.՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար, 2005-2007թթ.՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ, 2003 – 2005թթ.՝ ՀՀ վարչապետի օգնական: Եղել է Հայաստան - Եվրամիության Խորը եւ համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցությունների հայկական կողմի աշխատանքային խմբի անդամ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հայկական կողմի աշխատանքային խմբի ամդամ:

Նարեկ Մելքոնյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

«Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ տնօրեն, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ: Աշխատանքային գործունությունը սկսել է գործարար խորհրդատվության ոլորտում: 2002-2013թթ. աշխատել է Երևանի կոնյակի գործարանում նախ՝որպես ավագ ֆինանսիստ, ապա՝արտահանման մենեջեր և արտահանման բաժնի ղեկավար: 2013-19թթ. եղել է «Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ վաճառքների և մարքեթինգի տնօրենը, 2019թ-ից՝ տնօրեն: Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ է անցել Եվրոպայի և ԱՄՆ մի շարք առաջատար համալսարաններում: Ունի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, ավելի քան 20 տարվա դասավանդման փորձ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Սարգիս Ասատրյանց

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի միջազգայնացման և բարեփոխումների գծով պրոռեկտոր: 2014-2016 թթ.աշխատել է «Հայաստան» համահայկական հիմնադրամում որպես գլխավոր մենեջեր: 2006-2014 թթ. “Johnson & Johnson”, “Sara Lee”, “Lorvenn Paris” ընկերությունների պաշտոնական և բացառիկ ներկայացուցիչ հանիսացող «Պարտնյոր» ՍՊԸ-ում որպես բիզնեսի զարգացման մենեջեր: 2009թ-ից դասավանդում է ՀՊՏՀ-ում, ինչպես նաև մի շարք միջազգային կրկնակի և համատեղ դիպլոմներ շնորհող կրթական նախագծերում, ինչպիսիք են SWISS UMEF University Շվեյցարիա, London School of Commerce Միացյալ Թագավորություն: 2011թ-ից մասնակցել է որակավորման բարձրացման տարբեր միջոցառումների՝ դասընթացների, սեմինարների, գիտաժողովների, աշախաժողովների, համաժողովների, կոնֆերանսների աշխարհի 40-ից ավել երկրներում:

Մարինե Առաքելյան

LinkedIn **հարթակում անձնական էջի** հղումը

2009թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու: Դասախոսելուն զուգահեռ ավելի քան 8 տարի աշխատել է պետական կառավարման համակարգում, այնուհետև ղեկավարել է «Տնտեսական զարգացման նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ներկայումս աշխատանքային գործունեությունը շարունակում է ULS ՓԲԸ-ում՝ որպես զարգացման գծով փոխտնօրեն: ԱՄՆ UGRAD փոխանակման ծրագրի շրջանավարտ է (2002-2003թթ.): Մագիստրոսական կրթությունը ստացել է Շվեդիայի Լունդի համալսարանում միջազգային տնտեսագիտություն մասնագիտացմամբ (2008-2009թթ.): Շուրջ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

ԳՈՐԾԸՆԿԵՐ-
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարություն
ՀՀ ԱԺ

Մարզպետարաններ

ՀՀ նախարարություններ

Երևանի քաղաքապետարան
Համայնքների աշխատակազմեր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտները կարող են իրենց աշխատանքային գործունեությունը ծավալել պետական և տարածքային կառավարման մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության տարբեր կառույցներում:

Ողջու՛յն
Ես Միքայել Զալինյանն եմ

Ներկայումս աշխատում եմ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեում՝ որպես գլխավոր քարտուղար: Ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները և հմտությունները մշապես օգտակար են եղել տարբեր բնագավառներում իմ աշխատանքային գործունեության ընթացքում ՝ որոշումների կայացման ժամանակ, որի համար շնորհակալություն եմ հայտնում համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

Ողջու՛յն
Ես Ռուբեն Սաֆարյանն եմ

Աշխատում եմ ՀՀ կենտրոնական բանկի բանկերի պրուդենցիալ վերահսկողության ծառայությունում՝ որպես վերահսկող: Ավարտելով Ամերիկյան համալսարանի Գործարար վարչարարություն մասնագիտությամբ բակալավրը, ընդունվել և 2022թ.-ին ավարտել եմ ՀՊՏՀ-ն՝ ստանալով «Հանրային կառավարման» մագիստրոսի կոչում: Առավել, քան վստահ եմ, որ այս կրթական ծրագրի մագիստրոսները կարող են բարելավել հանրային կառավարման ոլորտը: Մագիստրոսական այս ծրագիրն ինձ տվել է թե՛ տեսական և թե՛ գործնական գիտելիքներ ու հմտություններ: Հուսով եմ, որ մոտ ապագայում կկարողանամ օգտագործել և փոխանցել ձեռք բերած գիտելիքները հանրային կառավարման ոլորտում: Հաշվի առնելով մասնագիտացված պրոֆեսորադասախոսական կազմը, ծրագիրն ունի մեծ պոտենցիալ՝ ՀՀ-ում ստեղծելու անգնահատելի ավելացված արժեք պետական կառավարման ոլորտում:

Ողջու՛յն
Ես Թեհմինե Կարապետյանն եմ:

Մագիստրատուրայում ուսումնառության տարիներին զուգահեռ աշխատանքի եմ ընդունվել ՀՀ կառավարությանը ենթակա ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնում՝որպես ղեկավարի տեղակալի օգնական: Տնտեսագիտական համալսարանում հանրային կառավարման համակարգի վերաբերյալ ստացած պատկերացումներն ու գիտելիքները, իհարկե, խթան են հանդիսացել աշխատանքում հաջողությունների հասնելու և իմ առջև դրված աշխատանքային պարտականություններն ըստ արժանվույն կատարելու համար: Միաժամանակ իմ համոզմունքն եմ հայտնում առ այն, որ այն կարողություններն ու գիտելիքները, որոնք տվել է հարազատ բուհը, ծառայելու են ի շահ Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների: Շնորհակալություն եմ հայտնում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին՝ջանք ու եռանդ չխնայելու, իրենց գիտելիքները և փորձը փոխանցելու համար:

Ողջու՛յն
Ես Արևիկ Բաղդասարյանն եմ

Մասնագիտությամբ լրագրող եմ: Ավարտել եմ Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ստացել մարզական լրագրողի մասնագիտական որակավորում: 2011 թվականից առ այսօր Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «Մարզական լրագրության» ամբիոնի դասախոս, ներկայումս նշված ամբիոնի վարիչ: 2020թվականին առաջնորդվելով Ուոլթ Դիսնեյի խոսքերով. «Եթե կարող ես երազել այդ մասին, ուրեմն կարող ես և անել դա» ես ընդունվեցի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ ընտրելով հանրայի կառավարում մասնագիտությունը: ՀՊՏՀ-ն ինձ տվեց մեծ կամք և հաջողության համար պայքարելու մեծ ձգտում: Ստացած ակադեմիական գիտելիքների շնորհիվ էլ այսօր ինձ որպես մասնագետ ավելի մրցունակ եմ զգում: